

հատուածները զատ ալ տպագրեց 1849-ին «Տընտեսական տեղեկութիւնք» անունով գրքովին մէջ. սորա քիչ մը եւրոպայեան ոճն ալ՝ նիւթին չափաւոր խրճուածեանը հետ միանալով՝ քիչ կարգացող եւ քիչ հասկըցող ունեցաւ: Այսու ամենայնիւ ազգին յառաջադիմութեանը ցանկացող մարդիկ անշուշտ պարտական են աշխատելու որ թէ՛ օրագիրներով եւ թէ՛ առանձին գրքերով մեր ազգին մէջ ալ տարածուին այս ամենահարկաւոր գիտութեան գոնէ գլխաւոր կտորները:

Այնպիսի ժամանակի մը մէջ են մարդիկ՝ արեւելք եւ արեւմուտք՝ որ իրենց չափաւոր ասլորուտը մեծ դժուարութեամբ կ'աւրեն. ամէն տեղ ստրկի պակասութիւն եւ առուտուրի դադրածութիւն կ'տեսնուի. ամէն տեղ սնանկութեան ձայներ ու մեծամեծ վաճառականներու կործանմունքներ կ'ըսուին. եւ այս խեղճութեանց պատճառ՝ որը կ'ըսէ թէ պատերազմներն են, որը կ'արծէ թէ պատերազմի կասկածներն են. որը կ'ըսէ թէ մարդկանց զեղխութիւնն է պատճառ, որն ալ թէ արհեստներու դադրիլը, մեքենաներուն շատնալը, աշխատաւորաց քիչնալը, ամէն բանի սղութիւնը, եւ այլն: Տնտեսական գիտութիւնը, որ քաղաքական տնտեսութիւն ալ կ'ըսուի, այս խնդիրներուն վրայ տեղնիտեղը խօսելովն ու մանրամասն քննութիւններ ընելովը՝ եւս առաւել հարկաւոր է ուրեմն մեր ժամանակին. վասն զի անկարելի է որ ողջամիտ մարդիկ խելք չսովորին անկից ու գոնէ փոքր իշատէ չհասկընան թէ ժողովրդեան մը հարստութեանը աղբիւրները որո՞նք են, եւ տէրութիւն մը ինչո՞վ կրնայ հարստանալ կամ աղբըտնալ:

Ասոր համար կ'յորդորեմք ամա մերազնեայ ուսումնասէր երիտասարդներն որ պաղ աչքով չընային այն գիտութեան վրայ, այլ մանաւանդ

սաստիկ մտադրութեամբ ջանան խելամուտ լինել անոր մէջ եղած զանազան խնդիրներուն, հետեւելով այն մեծանուն տնտեսագիտաց որ եւրոպացի ազգաց եւ տէրութեանց մեծամեծ օգուտներ ըրեր են իրենց գրութեանքներովը: Սոցա գլխաւորներէն մէկն եղած է ատենով Ադամ Սմիթ անգղիացին:

Ադամ Սմիթը ծնած էր Սկովտիոյ մէջ 1723-ին: Կլէսկոյի համալսարանին մէջ ուսմունքն աւարտելէն ետքը՝ առաջ էտիմպուրիկ քաղաքը ճարտասանութեան վարժապետ եղաւ, յետոյ Կլէսկոյի համալսարանը՝ բարոյական փիլիսոփայութեան: Փարիզ գնաց 1763-ին, հոն բարեկամացաւ Թիւրկոյ եւ Քէնէ անունով հռչակաւոր գաղղիացի տնտեսագէտներուն հետ, եւ հրատարակեց «Հարստութիւն ազգաց» մակագրով գիրքը, որով մեծ անուն հասնեց բոլոր եւրոպայի մէջ, եւ այն գրութեամբ շատ լեզուներ թարգմանուեցաւ. նոյնպէս ալ միւս գրքերը՝ որ շարադրեց մինչեւ իւր մահը (1790-ին), եւ բոլորը մէկէն հինգ մեծամեծ հատորներ բռնած են:

Ադամ Սմիթին գլխաւոր կարծիքը կամ վարդապետութիւնը այս է թէ՛ ազգի մը հարստութեան առաջին ու մեծ աղբիւրը աշխատանքն է. եւ թէպէտ ուրիշները կ'ալնդէին թէ աշխատանքէն աւելի առատ աղբիւր այս իրենքն է, երկրագործութիւն, արհեստ ու վաճառականութիւն, բայց անոնց ալ վարդապետութեան հիմը Սմիթին կարծեացը հետ կ'միանայ. վասն զի առանց աշխատանքի առոնք չեն կրնար ծաղկիլ: Բայց այս խնդիրը եւ ասկէց առաջ եկող տեսակ տեսակ հարկաւոր գիտելիքները աւելի մանրամասն բացատրութեան կարօտ են: Թերեւս մեք ալ առիթ ունենամք երբեմն սոցա վրայ ընդարձակօրէն խօսելու. առ այժմ գոհ լինիմք այսքանը միայն խօսելով Ադամ Սմիթին կենդանագրոյն դիմացը:

Ի Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն.

Ո՞վ է մարդուս ամենէն վնասակար թշնամին.

— Անձնասիրութիւնը:

Ի՞նչ բան է շնորհակալութիւնը.

— Յիշատակ երախտագէտ սրտի, որ կ'ընծայուին ընդհանրապէս բարութեանց փոխարէն:

Ի՞նչ կանեն ծոյլ մարդիկը.

— Միշտ կ'պատրաստուին այս կամ այն գործը սկսելու: